



«ՏԻՆՍ» ՍՊԸ
 ՀՀ, ք. Սևան, Սարգիս Սևանեցի 6, 1501
 ՀՎՀՀ 08613388
 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՍԵՎԱՆ» մ/ճ
 Հ/Հ 163148132398
 Հեռ.+374 60 747574
 Էլ. փոստ info@tins.am

Պայմանագրի համար / ID

Ամսաթիվ

(օր, ամիս, տարի)

«ՏԻՆՍ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը, ի դեմս տնօրեն Ս. Մարգարյանի, այսուհետ՝ Օպերատոր, մի կողմից և _____, ՀՀ անձնագիր _____ տրված _____, հասցե _____ այսուհետ՝ Բաժանորդ, մյուս կողմից (այսուհետ առանձին հիշատակման ժամանակ՝ Կողմ, համատեղ հիշատակման ժամանակ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն Պայմանագրով Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված Ծառայությունը, իսկ Բաժանորդը պարտավորվում է ընդունել Ծառայությունը և վճարել դրա դիմաց՝ Օպերատորի կողմից սահմանված սակագնով, որը նշվում է Բաժանորդի կողմից ներկայացված Ծառայության մատուցման հայտում (Դիմում-կարգազրույց). վերջինս՝ Դիմում-կարգազրույցը, կազմում է սույն պայմանագրի անբաժան մասը: Դիմում-կարգազրույց սահմանված սակագները կարող են փոփոխվել Օպերատորի կողմից միակողմանիորեն, այդ մասին նախապես պատշաճ կերպով Բաժանորդին ծանուցելու և պաշտոնական կայքում՝ www.tins.am, տեղեկություն հրապարակելու միջոցով:

1.2 Սույն պայմանագրի իմաստով Ծառայություն է համարվում՝ Բաժանորդի միացումը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցին և SkyNet ծառայության ակտիվացումը, որով Բաժանորդը ստանում է չերաշխավորված ինտերնետ կապը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Օպերատորը պարտավոր է՝

2.1.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով:

2.1.2 Սույն պայմանագրի կնքման պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Բաժանորդին միացնել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցին և ակտիվացնել SkyNet ծառայությունը, եթե Բաժանորդի կողմից պահպանվել են 2.2.1 կետով ստանձնած պարտավորությունները և սույն պարտավորության իրականացման համար չեն առաջացել սույն պայմանագրի 4-րդ մասում նշված անհաղթահարելի խոչնդոտները: Հակառակ դեպքում Բաժանորդին Օպերատորի հաշվին տրամադրել ինտերնետ կապ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար:

2.1.3 Ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավել քան 15 օրվա ընթացքում վերացնել մատուցված Ծառայության արդյուքում ի հայտ եկած թերություններն ու անսարքությունները, որոնք առաջացել են Օպերատորի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցում:

2.1.4 Վերացնել ընդունման-հանձնման ակտով Բաժանորդին տրված սարք(եր)ի անսարքությունները կամ խոտանները, եթե դրանք առաջացել են Օպերատորի մեղքով, կամ սարքը ի սկզբանե եղել է խոտանված, իսկ վերացման անհնարինության դեպքում փոխել սարքը նորով:

2.2 Բաժանորդը պարտավոր է՝

2.2.1 Սույն պայմանագրի կնքման պահից ընդունել Օպերատորի կողմից իրեն հանձնվող սարքավորումները, որոնք անհրաժեշտ են սույն պայմանագրի 1.1 հավելվածով նշված Ծառայության մատուցումը ապահովելու համար: Սարքավորումների ընդունումից հրաժարվելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում վճարել Օպերատորին 20.000 դրամ (քսան հազար դրամ) իբրև տույժ: Սարքավորումների ընդունման ժամանակ Բաժանորդը կամ վերջինիս կողմից լիազորված անձը ստորագրում է սարքավորումների հանձնման-ընդունման ակտ, որը սույն պայմանագրի անբաժան մասն է:

2.2.2 Բաժանորդը պարտավոր է մատուցվող SkyNet ծառայության դիմաց համաձայն գործող սակագների, (ընթացիկ սակագները հրապարակվում են Օպերատորի պաշտոնական կայքում) հաշվարկված գումարը վճարել ըստ վերջին

դիմում-կարգազրի պայմանների կամ Օպերատորի կողմից փոփոխված պայմանների, որի մասին նա պատշաճ կերպով իրազեկվել է և տվել իր համաձայնությունը սույն պայմանագրի 3.1 կետի համաձայն:

2.2.3 Հաշվարկային ամսվա ընթացքում սույն պայմանագրի լուծման դեպքում՝

2.2.3.3 Օպերատորի կողմից կարող է սահմանվել պայմանագրի լուծման ժամանակ վերջնահաշվարկի հատուկ կանոններ՝ Բաժանորդի կողմից պայմանագրի լուծման պահին օգտագործվող սակագնային փաթեթի պայմաններին համապատասխան:

2.2.3 Որևէ կերպ չտրամադրել/չփոխանցել/ Օպերատորի կողմից իրեն մատուցվող Ծառայությունները երրորդ անձի:

2.3 Օպերատորը իրավունք ունի՝

2.3.1 Օպերատորը իրավունք ունի ցանկացած ժամանակ փոփոխել Ծառայությունների մատուցման սակագները, այդ մասին 30 օր առաջ տեղեկացնելով Բաժանորդին: Նոր սակագնի հետ համաձայն չլինելու դեպքում Բաժանորդը 25 օրվա ընթացքում տեղեկացնելով կարող է հրաժարվել պայմանագրից: Հակառակ դեպքում Պայմանագիրը շարունակում է գործել կողմերի միջև նոր պայմաններով և նոր սակագնի հիման վրա:

2.3.2 Օպերատորը իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե՝

2.3.2.1 Բաժանորդի կողմից խախտվել է սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները:

2.3.2.2 Տեխնիկական պատճառներով ծառայության մատուցումը անհնար է, կամ իր մոտ առկա տեխնիկական հնարավորությունները բավարար չեն ծառայության մատուցումը կամ մատուցման պատշաճ որակը ապահովելու համար՝ նախապես այդ մասին պատշաճ կերպով ծանուցելով Բաժանորդին:

2.4 Բաժանորդը իրավունք ունի՝

2.4.1 Բաժանորդը իրավունք ունի ցանկացած պահի լուծել սույն պայմանագիրը այդ մասին Օպերատորին դիմում ուղարկելու միջոցով: Պայմանագիրը լուծված է համարվում Բաժանորդի կողմից Հետհանձնման-ընդունման ակտով, Օպերատորի կողմից տրված սարքավորումները Օպերատորին հանձնելու և սույն պայմանագրով ու սույն պայմանագրի անբաժան մասը կազմող պայմանագրերով և ակտերով նախատեսված վճարային պարտավորությունները կատարելու պահից:

2.4.2 Բաժանորդը իրավունք ունի ցանկացած պահի ստանալու Ծառայության դիմաց իր կողմից կատարված վճարումների քաղվածքները, օգտագործած մեզաբայթերի մասին տեղեկությունները՝ այդ մասին գրավոր կերպով դիմելով Օպերատորին:

2.4.3 Բաժանորդը իրավունք ունի պահանջել Օպերատորից պահպանել իր անձնական տվյալների գաղտնիությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՆԸ, ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1 Ծառայությունների գինը որոշվում է վերջին Դիմում-կարգազրի հիման վրա, իսկ հետագայում այն կարող է միակողմանի փոփոխվել Օպերատորի կողմից, վերջինիս (Օպերատորի) կողմից այդ մասին նախապես պատշաճ կարգով Բաժանորդին ծանուցելու և իր պաշտոնական կայքում փոփոխված պայմանները տեղադրելու միջոցով:

3.2 Հաշվարկային ամսվա ընթացքում սույն պայմանագրի լուծման դեպքում՝

3.2.1 Եթե բաժանորդը օգտվում է մեզաբայթային սակագնային փաթեթից, Բաժանորդը պարտավոր է ընթացիկ ամսվա SkyNet մեզաբայթային սակագնային փաթեթի համար վճարել գնացուցակով սահմանված սակագինն ամբողջությամբ:

3.2.2 Եթե բաժանորդը օգտվում է անսահմանափակ սակագնային փաթեթից, Բաժանորդը պարտավոր է ընթացիկ ամսվա SkyNet անսահմանափակ սակագնային փաթեթի համար վճարել Օպերատորի կողմից տրամադրված ծառայության օրերին համապատասխան:

3.3 Օպերատորի կողմից կարող է սահմանվել պայմանագրի լուծման ժամանակ վերջնահաշվարկի հատուկ կանոններ՝ Բաժանորդի կողմից պայմանագրի լուծման պահին օգտագործվող սակագնային փաթեթի պայմաններին համապատասխան:

3.3.1 Մատուցվող SkyNet ծառայության դիմաց Բաժանորդի կողմից սահմանված ժամկետներում վճարումները չկատարելու դեպքում Օպերատորը իրավունք ունի Բաժանորդին մատուցվող SkyNet ծառայությունը ժամանակավորապես կասեցնել: Կասեցման ժամանակահատվածի համար ծառայության գումարը հաշվարկվում է և ենթակա է վճարման:

3.3.2 Ծառայության կասեցման ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ Բաժանորդի կողմից վճարում չկատարելու դեպքում SkyNet ծառայության մատուցումը դադարեցվում է և պայմանագիրը լուծվում է առանց ծանուցման:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Սույն պայմանագիրը կնքվում է 1 /մեկ/ տարի ժամկետով: Պայմանագիրը համարվում է երկարաձգված նույնքան ժամկետով, եթե Կողմերից մեկը սույն պայմանագրի ժամկետը լրանալուց 30 օր առաջ գրավոր ծանուցմամբ չի հրաժարվում դրանից:

Պայմանագրի կնքումից հետո առաջին հաշվարկային տարվա ընթացքում սույն պայմանագիրը Բաժանորդի նախաձեռնությամբ լուծելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է վճարել Հանձնման-ընդունման ակտով իրեն տրված սարքավորումների ամբողջական գումարը:

5.2 Սույն պայմանագիրը համարվում է լուծված՝ Օպերատորի կողմից Բաժանորդին տրված սարքավորումների Հետհանձնման-ընդունման ակտը Օպերատորի կողմից ստորագրելուց հետո:

5.3 Սույն պայմանագիրը կարող է լուծվել՝

5.3.1 Բաժանորդի կողմից՝ դիմումի հիման վրա:

5.3.2 Օպերատորի նախաձեռնությամբ՝

. Ցանկացած պահի՝ այդ մասին նախապես պատշաճ կերպով ծանուցելով Բաժանորդին:

. Բաժանորդի կողմից սույն պայմանագրի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելու դեպքում:

. Տեխնիկական պատճառներով ծառայությունը մատուցելու անհնարինության դեպքում՝այդ մասին նախապես պատշաճ կերպով Բաժանորդին ծանուցելու պայմանով:

. Սույն պայմանագրի 4 մասում նշված դեպքում:

6. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից:

ՕՊԵՐԱՏՈՐ

«ՏԻՆՍ» ՍՊԸ ք.Սևան, Սարգիս Սևանեցի 6

ՀՎՀՀ 08613388

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՍԵՎԱՆ» մ/ճ

Հ/Հ 163148132398

Հեռ.+374 60 747574

Պաշտոնական կայք՝ www.tins.am

Էլ. փոստ՝ info@tins.am

Պատասխանատու անձ՝ _____

ԲԱԺԱՆՈՐԴ

Ա.Ա.Հ.

Անձնագիր՝ _____

տրված՝ _____

Հասցե՝ _____

Հեռ/քջջ. _____

Լր. կոնտակտ՝ _____

(ստորագրություն)